Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
փետրվարի 11-ի N 168 - Լ որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2019 թվականի
մայիսի 10-ի N 553 - Լ որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԵՎ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ԻՆՔՆԱՇԽԱՏ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ

NN ը/կ	Միջոցառման անվանումը		Ակնկալվող արդյունքը	Պատասխանա-տու կատարողը	Համակատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	1-ին փուլ	Ճշգրտել փողոցների անվանումները՝ այն համեմատելով համայնքներում փաստացի փողոցների անվանումների հետ	Հետագա աշխատանքներն իրականացնելու համար ունենալ ճշգրտված փողոցների անվանումներ	Կադաստրի կոմիտե	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2021 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.		Ճշգրտել հասցեների ռեեստրը՝ այն համեմատելով համայնքներում փաստացի հասցեավորման հետ	Հետագա աշխատանքներն իրականացնելու համար ճշգրտված հասցեների ռեեստր	Կադաստրի կոմիտե	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2022 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

3.	2-րդ փուլ	Հասցեների միասնական ռեգիստրի և տեղեկատվական համակարգի ստեղծում և Երևան համայնքի, 1 քաղաքային ու 1 գյուղական բնակավայրի հասցեավորված օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքագրում, մուտքագրում, համակցում կադաստրային քարտեզներին և համակարգի պիլոտային գործարկում (փորձարկում), որը հետագայում կիրառվելու է նաև մյուս համայնքներում	Թերությունների վերհանում և դրանց վերացում և նախա-պատրաստական աշխատանքներ հասցեների միասնական ռեգիստրի և հասցեների ռեեստրի ինքնաշխատ տեղեկատվական համակարգում ճշտված ռեեստրի և կադաստրային քարտեզների ներբեռնման համար	Կադաստրի կոմիտե	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2021 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
4.	3-րդ փուլ	Մարզկենտրոններում, քաղաքային համայնքներում համայնքի ղեկավարների հետ հանդիպումների կազմակերպում, հասցեների ռեեստրի ինքնաշխատ տեղեկատվական համակարգից օգտվելու կարգի ներկայացում, մասնագետների վերապատրաստում: Բոլոր համայնքներից հասցեավորված օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքագրում, մուտքագրում և համակցում կադաստրային քարտեզներին	Համակարգում ներառված հասցե-ների վերաբերյալ տեղեկատվության առցանց թարմացում, ՏԻՄ մարմիններին համակարգ մուտք գործելու և անշարժ գույքի համարա-կալման հայտ ներկայացնելու հնարավորություն	Կադաստրի կոմիտե	ՀՀ տարածքային կառավարման և ենթա-կառուցվածքների նախարարություն	2022 թվականի հունիսի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

5.		Հասցեների միասնական ռեգիստրի և հասցեների ռեեստրի ինքնաշխատ (ավտոմատացված) տեղեկատվական համակարգի գործարկում՝ ինտեգրված կադաստրի և փոխգործելիության շրջանակներում	Հասցեների ռեեստրում անշարժ գույքի հասցեի անվանափոխման, համարակալման ցանկացած փոփոխության արտացոլում և հասանելիություն օգտվողների համար, հասցեի հիման վրա գործող պետական և մասնավոր ռեգիստրների և այլ համակարգերի փոխգործելիության ապահովում, ինչպես նաև տեղեկատվության ինքնաշխատ ձևով արտացոլում կադաստրային և առցանց տիրույթում առկա քարտեզներում	Կադաստրի կոմիտե	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)	2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

12.02.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ